ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20 ապրիլի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

ՕՐԱԿԱՐԳ

- 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:

  /զեկ. Մ.Ա.Զաքրյան/

- Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին

  /զեկ. Ամբ. Վարիչներ/

- Հաղորդում ավարտական աշխատանքների ախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցի հաստատման մասին:

  /զեկ. Մ.Ա.Զաքրյան/

- Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում: /ԿԾ պատասխանատուներ/

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝6/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին հարցի՝ « 2021-22 ուս. տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում», հարցի **վերաբերյալ** Մ.Զաքարարյանի հաղորդումը հետևյալն էր.

2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննություններին մասնակցել են 60 ուսանողներ: Դրական գնահատականներ են ստացել 41 ուսանողներ, 19 ուսանողներ ստացել են անբավարար: Առաջադիմությունը առաջին կուրսում կազմում է 66,67%, 2-րդ կուրսում՝ 53,33%, 3- րդ կուրսում՝ 83,33% : Ընդհանուր առաջադիմությունըկազմում է 68,33% :

Արտահայտվեցին-Գ.Սարգսյանը ներկայացրեց, որ առաջին կուրսում վատ սովորողները տղաներն են, բոլորը ստացել են 0: Դժվար են մոտիվացվում, պատճառաբանում են, որ նոր են վերադարձել զին.ծառայությունից, Գ. Սիմոնյանը հավելեց կամ ճամպուկային տրամադրությաբ սպասում են զինակոչի: Ա.Հովակիմյանը առաջարկեց իրականացնել ընդունելության քննությունների և ուսումնառության տարիների գնահատականների վիճակագրություն,կատարել եզրահանգումներ: Ուսանողուհի Հ.Ստեփանյանը ասաց, որ քննական տոմսերի հարցերը համապատասխանում էին իրենց անցած ծրագրային թեմաներին, դժգոհություններ չունեն:

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 6/2

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ հարցի՝ « Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին», վերաբերյալ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ, Ա.Հովակիմյանը ներկայացրեց , որ ավարտական աշխատանքների կատարման ընթացքը վերահսկվում է, բոլոր ուսանողների աշխատանքները համապատասխանում են թեմաներին, «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչ Գ.Սիմոնյանը ևս հաստատեց, որ ավարտական աշխատանքների ընթացքը վերահսկվում է և չունենք այնպիսի ուսանող, որ մինչ այժմ ընդհանրապես չի աշխատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-ավարտական աշխատանքի ղեկավարներ Մ.Զաքարյանը Գ.Սիմոնյան, Ա.Հովակիմյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը ներկայացրեցին իրենց ղեկավարած ուսանողների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ:

ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 6/3

Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը գնահատել բավարար:

Օրակարգի երրորդ հարցի ՝ «Հաղորդում ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցի հաստատման մասին», վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն էր.

Արդեն հաստատված է ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովի հետևյալ կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ տեխ.գ.դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գևոևգի Հարությունյան,

Անդամներ՝

- դեկանի ժ/պ,Մ.Ա.Զաքարյան,
- Ծ/ԻՏ ամբիոնի ժ/պ Ա.Ս.Հովակիմյանը
- ԸՄԲ ամբիոնի ժ/պ Գ.Ս.Սիմոնյանը
- Ծ/ԻՏ ամբիոնի դասախոս, տ.գ.թ.,դոցենտ, Ռ.Մ.Յոլչյանը,

Արտաքին շահակիցներ՝

- Ս.Մնացականյանը
- «Սիներջի ինթերնեյշնալ սիսթեմ» ընկերության DB ինժեներ Կ.Ֆ.Սարոյանը
- «DIGITAL WAVE» կազմակերպության տնօրեն Ա.Բ. Թովմասյանը

Մ.Զաքարյանը առաջարկեց քննարկել ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության օրերը և լինի այնպես, որ պաշտպանության և նախապաշտպանության միջև ինտերվալը լինի մոտավորապես երկու շաբաթ, որպեսզի

ուսանողները նախապաշտպանությունից հետո մեկ շաբաթվա ընթացքում ուղղեն թերությունները և ուղարկեն գրախոսներին:

Արտահայտվեցին- Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

Արտահայտվողները առաջարկեցին,

ավարտական աշխատանքների նախապաշտպանության օրը՝ մայիսի 13-ին և պաշտպանության օրը՝ մայիսի 29-ին:

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 6.4

ՈՐՈՇԵՑԻՆ- ավարտական աշխատանքների պաշտպանության օրը՝ մայիսի 29, ներկայացնել տնօրենի հաստատմանը:

Օրակարգի հինգերորդ հարցի՝ « Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում», **վերաբերյալ** «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ,ԿԾ պատասխանատու Ա.Հովակիմյանի հաղորդումը հետևյալն էր.

Բավականին մանրակրկիտ ուսումնասիրել ենք ուսումնական պլանը, տեղի են ունեցել փոփոխություններ, որովհետև ուսումնական գործընթացի նոր կարգի համաձայն կրթական ծրագրերը բերվել են մոդուլային համակարգի, ինչպես նաև պետք է ապահովել շարժունությունը: 2022-26 ուս. տարիների ուսումնական պլանը վերանայվել է ամբողջությամբ: Երրորդ կիսամյակից ինֆորմատիկա մասնագիտությանը զուգահեռ ավելանալու են մեխատրոնիկայի և տեղեկատվական անվտանգության հետ կապված բլոկներն են ավելանալու:

Մ.Ճաղարյանը ներկայացրեց, որ ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի համաձայն յուրաքանչյուր կիսամյակում՝ 30կրեդիտի շրջանակում ներառվելու է առավելագույնը 7 մոդուլ, I կուրսում 9 մոդուլ և որ առարկաներն են ընդգրկվել համապատասխան մոդուլներում: Մ.Ճաղարյանը ներկայացրեց, որ մոդուլի տարբեր բաղադրիչները պետք է ներառվեն մեկ գնահատման մեջ, պետք է հաշվի առնել նաև ինքնուրույն աշխատանքները՝ դասախոսի

հայեցողությամբ: Ընտրվել են հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաները: Անհրաժեշտ է գրել մոդուլի նկարագրիչները նոր բովանդակությամբ, բաղադրիչներով, գնահատման մոտեցման նոր ձևով:

Ուսումնական պլանը ապրիլի 25-ին պետք է ներկայացվի ուս.մեթ.վարչ. հաստատմանը:

Արտահայտվեցին- Գ.Սիմոնյանը, Գ.Սարգսյանը, Գ.Գուլակյանը, Ք.Օթարյանը: Արտահայտվողները ներկայացրեցին նոր ուս.պլանում ներկայացված մոդուլի բաղադրիչների, գնահատման կարգի, ինքնուրույն աշխատանքների վերաբերյալ կարծիքներ: Տեղի ունեցավ երկարատև և բուռն քննարկումներ: Մանրակրկիտ դիտարկվեցին յուրաքանչյուր կիամյակի առարկաները և մոդուլ բաղադրիչները և մոդուլի անվանումները:

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 6.5

Ուսումնական պլանը ներկայացնել ուս.մեթ.վարչ. հաստատմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ